ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Ստեփանակերտ, Թումանյան փող. 62 ☎ 047-97-71-19, fax 047-97-15-37
e-mail: kgn.nkr@mail.ru, edu@edu.nkr.am, www.edu.nkr.am

N: 01-412 «19» հունիսի 2013թ

ՀՀ ԿԳ նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ տնօրեն պարոն Ա.Բլեյանին

Հարգելի պարոն Բլեյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության «Ասպետ» ռազմամարզական ճամբարի մեկնարկը կտրվի 2013թ. հուլիսի 15-ից, երեք հերթափոխով, յուրաքանչյուրը 10 օր տևողությամբ՝ հուլիսի 15-ից 24-ը, հուլիսի 26-ից օգոստոսի 4-ը և օգոստոսի 6-ից 15-ը, հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուստարվա 11-րդ դասարանների աշակերտների ընդգրկմամբ:

Մեր կողմից ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ակնկալում ենք կրթահամալիրի թվով 60 պատանիների մասնակցությունը այդ ճամբարում:

Ըստ նախնական հաշվարկների ցանկալի է սեբաստացիների մասնակցությունը կազմակերպել 1-ին (հուլիսի 15-24-ը) և 2-րդ (հուլիսի 26-ից օգոստոսի 4-ը) հերթափոխերում՝ 30-ական պատանիների մասնակցությամբ:

Խնդրում եմ Ձեզ նշված պայմանների և ճամբարի գործունեության համար տալ Ձեր առաջարկությունները:

Հարգանքներով՝

Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ